ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

«08» հոկտեմբեր 2014թ.

ՀՐԱՄԱՆ N 240-Հ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի պահանջներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության (այսուհետ՝ Գլխավոր վարչություն) տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձ նշանակել Գլխավոր վարչության մամուլի քարտուղար Ռուբեն Գրդզելյանին:

2. Գլխավոր վարչության տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու անձ Ռ. Գրդզելյանին՝ ապահովել տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողների պարտականությունների կատարումը՝ «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան:

3. Գլխավոր վարչության անձնակազմի կառավարման բաժնի պետ Է. Տոնիկյանին՝ պատրաստել սույն հրամանից բխող Գլխավոր վարչության մամուլի քարտուղար Ռ. Գրդզելյանի հետ կնքված աշխատանքային պայմանագրում լրացում կատարելու մասին համաձայնագրի նախագիծ և ներկայացնել ստորագրման:

4. Գլխավոր վարչության աշխատակազմի ղեկավար Ս. Հակոբյանին՝ ապահովել Գլխավոր վարչության տեղեկատվության ազատության ապահովման պատասխանատու պաշտոնատար անձի վերաբերյալ տեղեկատվության տեղադրումը Գլխավոր վարչության ինտերնետային վեբ կայքէջում:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

Գլխավոր վարչության պետ Ա. Մովսեսյան